ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳՊՀ ուսումնական ռեսուրսներից առկա ուսուցման բաժնի ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն

ԳԱՎԱՌ 2025

Հարցման արդյունքների վերլուծությունը կատարվել է ԳՊՀ որակի ապահովման բաժնի կողմից 2025թ. հունվարի 22-ին:

Որակի ապահովման բաժնի պատասխանատուներ՝ Հայրապետյան Ք.

Նախրատյան Մ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Հարցման ընդհանուր նկարագիրը 3
II. Հարցման մեթոդաբանությունը 3
III. Ուսումնական գործընթացից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատում.....4
IV. Եզրակացություններ և առաջարկություններ 13

I. Հարցման ընդհանուր նկարագիրը.

Ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածությունը գնահատելու, վերլուծություն իրականացնելու, ուսման որակը բարելավելու նպատակով Գավառի պետական համալսարանի (այսուհետ՝ ԳՊՀ, Համալսարան) որակի ապահովման բաժնի կողմից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների շրջանում իրականացվել է հարցում նախապես մշակված առցանց (online) անանուն հարցաթերթիկի միջոցով:

Հարցման նպատակն է՝ բացահայտել առկա խնդիրները, ուսումնասիրել, վերլուծել, գնահատել ուսանողների կարծիքները, նկատառումները, առաջարկությունները, դժգոհությունները, դրանց հաշվառմամբ՝ ներկայացնել առաջարկություններ և ձեռնարկել միջոցներ՝ ուսումնական գործընթացի որակն ու արդյունավետությունը բարձրացնելու, հիմնական շահառուների բավարարվածության աճին նպաստելու համար:

II. Հարցման մեթոդաբանությունը.

Հարցաթերթը բաղկացած է փակ, բաց, կիսաբաց և ինտերվալային հարցերից: Հարցաթերթի հարցերը մշակվել և կազմվել են որակի ապահովման բաժնի աշխատակիցների և ԳՊՀ դասախոսների, ուսանողների համատեղ աշխատանքի արդյունքում: Հարցաթերթի նպատակն է որակական և քանակական տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը, որը միտված է ԳՊՀ-ում կրթության որակի բարձրացմանը և ներքին շահակիցների բավարարվածության աճին:

III. Գավառի պետական համալսարանում ուսուցման գործընթացից առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողների բավարարվածության գնահատում

Գավառի պետական համալսարանում առկա բաժնում սովորող 296 ուսանողներից հարցմանը մասնակցել են 204-ը, որը կազմում է գործող ուսանողների 69 %-ը /նախորդ ուստարում՝ 59%-ը/:

1. Ընդհանուր տեղեկություններ

Հարցմանը մասնակցած ուսանողների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների

Ֆակուլտետը, բաժինը	Ուսանողների ընդհանուր թիվը	Հարցմանը մասնակիցների թիվը	Հարցմանը մասնակիցների տոկոսային հարաբերությունը
	Առկա	Առկա	
	Բակալավր/մագիստրոս	Բակալավր/մագիստրոս	
Բնագիտատնտեսագիտական	**111/19**	**68/13**	48.10%
Ֆինանսներ /ըստ ոլոտի/	42/5	29/4	70%
Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	9/5	5/3	57%
Տնտեսագիտություն	30/4	14/3	50%
Բնապահպանություն և բնօգտագործում	-	-	-
Սերվիս	15	12	80%
Համակարգչային ճարտարագիտություն	12/5	5/3	47%
Դեղագործական քիմիա	3	3	100%
Հումանիտար մասնագիտությունների	**109/57**	**74/49**	**60.03%**
Իրավագիտություն	33/31	20/26	75%
Պատմություն	10/7	8/6	82%
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	15/10	15/9	96%
Հայոց լեզու և գրականություն	15/5	11/4	75%
Ռուսաց լեզու և գրականություն	2	2	100%
Անգլերեն լեզու և գրականություն	34/4	18/4	57%
Ընդամենը	**220/76**	**142/62**	54.5%
Ընդամենը	**296**	**204**	**69%**

Հաջորդիվ ընդհանուր մասնակիցների թիվը՝ 204-ը, կընդունենք որպես 100%, և մասնակցությունն ըստ ֆակուլտետների արդեն կունենա հետևյալ պատկերը (տե՛ս գծապատկեր 1):

Ուսանողների մասնակցությունն՝ ըստ ֆակուլտետների

Գծապատկեր 1



2. ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈ՞ՒՄ Է ԱՐԴՅՈՔ ԳՊՀ-Ի ԿՈՂՄԻՑ ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ուսուցանվող մասնագիտությունների մասին.

Գծապատկեր 2.



Հարցվողների 99,07%-ը հարցին պատասխանել է «այո», 0,93%-ը (2 ուսանող)՝ «ոչ»: «Ոչ» պատասխանները տրվել են Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի առկա բաժնի «Սերվիս» մասնագիտության 2-րդ կուրսի և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի առկա բաժնի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողների կողմից:

2.2. Մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորությունների և պայմանների մասին.

Գծապատկեր 3.



2024-2025 ուսումնական տարվա հարցման մասնակիցների 96,0%-ը հարցին պատասխանել է «այո», 4%-ը (8 ուսանող)՝ «ոչ»:

«Ոչ» պատասխաններ տրվել են.

Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ

Առկա ուսուցման բաժին.

1. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտության բակալավրիատի 3-րդ, 4-րդ կուրսեր
2. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրս,
3. «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրիատի 2-րդ կուրս,

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ

Առկա ուսուցման բաժին.

1. «Անգլերեն լեզու և գրականություն» բակալավրիատի 2-րդ, 3-րդ կուրսեր
2. Պատմություն մասնագիտությոն բակալավրիատի 3-րդ կուրս,
3. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրիատի 3-րդ կուրս:

2.3. Ուսումնական ռեսուրսների, ուսանողներին մատուցվող ուսումնաօժանդակ ծառայությունների մասին.

Գծապատկեր 4.



2024-2025 ուստարում հարցվողների 97,90%-ը հարցին պատասխանել է «այո», 2,10%-ը (4 ուսանող)՝ «ոչ»:

«Ոչ» պատասխաններ հիմնականում տրվել են.

Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ

Առկա ուսուցման բաժին.

1. «Ֆինանսներ (ըստ ոլորտի) » մասնագիտության բակալավրիատի 3-րդ կուրս,
2. «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրիատի 1-ին կուրս:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ

Առկա ուսուցման բաժին.

1. «Իրավագիտություն» մասնագիտությոն բակալավրիատի 2-րդ կուրս,
2. «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրիատի 1-ին կուրս:

2.4. Արդյունավետ ուսուցմանը նպաստող խորհրդատվական ծառայությունների մասին.

Գծապատկեր 5.



2024-2025 ուսումնական տարում հարցվողների 96,30%-ը հարցին պատասխանել է «այո», 3,7%-ը (6 ուսանող)՝ «ոչ»:

«Ոչ» պատասխաններ 2024-2025 ուսումնական տարում տրվել են հետևյալ կուրսերի ուսանողների կողմից.

Բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ

Առկա ուսուցման բաժին.

1. «Ֆինանսներ (ըստ ոլորտի)» մասնագիտության 2-րդ, 3-րդ կուրսեր,
2. «Սերվիս» մասնագիտության 2-րդ կուրս,

Առկա ուսուցման բաժին.

1. «Իրավագիտություն» մասնագիտության 2-րդ կուրս,
2. «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության 1-ին, 3-րդ կուրսեր:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. Ուսումնառության տպագիր ռեսուրսներ

Գծապատկեր 6.

Ռեսուրսներ	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Առկա չէ
Դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ	29%	34%	23%	8%	6%
Դասախոսություններ	38%	41%	15%	3%	3%
Մասնագիտական գրականություն	31%	39%	19%	7%	4%
Ուսումնական պլակատներ և քարտեզներ	19%	28%	29%	8%	16%
Թերթեր, ամսագրեր, տեղեկատվական բրոշյուրներ	12%	30%	25%	10%	23%

3.2.Ուսումնառության էլեկտրոնային և համացանցային ռեսուրսներ

Գծապատկեր 7.

Ռեսուրսներ	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
ԳՊՀ պաշտոնական կայքէջ	45%	38%	14%	3%
ԳՊՀ էլեկտրոնային https://library.gsu.am/ գրադարան	36%	36%	19%	7%
ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման http://learn.gsu.am/ համակարգ	39%	38%	13%	8%
ԳՊՀ էլեկտրոնային քննությունների անցկացման հարթակ՝ https://exam.gsu.am/	21%	39%	19%	21%
Ազատ Wi-Fi գոտիներ	54%	30%	10%	2%

3.3. Ուսումնական ենթակառուցվածքներ

Գնահատման արդյունքներն ամփոփելիս հաշվի են առնվել ենթակառուցվածքի կիրառելիության առանձնահատկությունները՝ ըստ մասնագիտությունների պահանջարկի, որպեսզի բացառվեն ոչ նպատակային բացասական պատասխանների հաշվառումը:

Գծապատկեր 8.

Ենթակառուցվածքներ	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար
Համակարգչային լսարաններ	37%	41%	17%	4%
Բնագիտության լաբորատորիա	29%	39%	25%	3%
Վ.Ավետյանի անվան թանգարան	43%	40%	13%	3%
Կրիմինալիստիկայի լաբորատորիա	21%	40%	22%	17%
Երաժշտության լսարան	29%	39%	23%	6%
Գրադարան	49%	39%	10%	2%
Ընթերցասրահ	47%	39%	11%	2%
Նկարչության աշխատասենյակ	32%	38%	23%	3%
Մանկավարժահոգեբանական աշխատասենյակ	37%	41%	17%	3%
Լինգաֆոնային աշխատասենյակ	33%	38%	23%	4%
Սխեմատեխնիկայի լաբորատորիա	5%	25%	38%	32%

4. Օգտվո՞ւմ եք ԳՊՀ հանրակացարանից:

Գծապատկեր 9.

Հարցվողների միայն 2%-ն է (4 ուսանող) հարցին պատասխանել «այո»:

Հանրակացարանից օգտվող ուսանողները նաև գնահատել են հանրակացարանում կեցության պայմանները (տե՛ս գծապատկեր 10):

Գծապատկեր 10.



Հանրակացարանից օգտվող ուսանողներից 2-ը նշել է «գերազանց» գնահատականը՝ գտնելով, որ հանրակացարանը հիանալի կահավորված է, մաքուր է: Առկա են ուսանողի հանգստի համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

2-ը նշել է «լավ» գնահատականը՝ գտնելով, որ հանրակացարանը կահավորված է, մաքուր է, սակայն կարիք ունի վերանորգման:

Հարցվողների կողմից «բավարար» և «անբավարար» գնահատականներ չեն նշվել:

5. Խնդրում ենք ներկայացնել Ձեր առաջարկությունները ԳՊՀ ուսումնական ռեսուրսները բարելավելու ուղղությամբ:

Հարցվողները ներկայացրել են հետևյալ առաջարկությունները.

1. Համալսարանի ներսում ստեղծել սննդի կետ:
2. Համակարգիչների մեծ մասը չեն ծառայում իրենց նպատակին:
3. Համակարգչային լսարանների ավելացում:
4. Լսարաններում համակարգիչների առկայությունը ցանկալի է:
5. Մատյանները թվայնացնել:
6. Լսարանի դռները չունեն կողպեքներ:
7. Ցանկալի կլիներ յուրաքանչյուր լսարանում ունենալ լուսացրիչ:
8. Խնդրում ենք կազմակերպել ուսանողական Էքսկուրսիաներ:
9. 4-րդ հարկի լսարանները խնդրում ենք վերանորոգել:
10. Ջեռուցում կա, սակայն 4-րդ հարկի լսարանները չեն տաքանում:
11. Պրակտիկաների տևողությունը երկարացնել:
12. Սահմանափակել օտար անձանց մուտքը ԳՊՀ:
13. Համալսարանի անցակետը չի վերահսկվում:
14. Դասախոսները շատ են ծանրաբեռնում:
15. Ընթերցասրահը կարիք ունի վերանորոգման:

IV. Եզրակացություններ և առաջարկություններ.

Ամփոփելով հարցման արդյունքները, կարող ենք նշել, որ հարցմանն առավել ակտիվ մասնակվել են Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողները:

Հարցվողների գերակշռող մասը նշել է, որ իրականությանը համապատասխանում է Համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը աշխատաշուկայում մասնագիտության պահանջարկի, մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման հնարավորությունների, ուսումնական ռեսուրսների, ուսանողական օժանդակ ծառայությունների, խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ առկա բաժնի ավարտական կուրսերում սովորողները կարիք ունեն մասնագիտական գրականության:

Ուսանողների բավարարվածությունը ԳՊՀ ուսումնական գործընթացից ամբողջովին ուսումնասիրելու և վերլուծելու համար կարևոր են նաև որակական բաց հարցերը:

Հարցվողների մեծամասնությունը, ի թիվս ԳՊՀ-ի բազում առավելությունների, նշել են նաև թերություններ և առաջարկություններ, որոնց վերաբերյալ առաջարկում ենք համապատասխան ստորաբաժանումներին միջոցառումների պլան մշակել և զեկուցել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի նիստերում:

ԳՊՀ ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծությունը, եզրակացություններն ու առաջարկությունները հղվել են համապատասխան ստորաբաժանումներ (ֆակուլտետներ, ամբիոններ), որպեսզի ուսումնասիրվեն, ԳՊՀ ռեկտորատի կամ գիտական խորհրդի նիստերում ներկայացվեն համապատասխան լուծումներ և առաջարկություններ, ձեռնարկվեն միջոցներ՝ ԳՊՀ-ում կրթության որակի ապահովման և հիմնական շահառուների՝ ուսանողների գոհունակության աստիճանի շարունակական բարձրացման նպատակով: